

**«COVID 19- ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԷԿՈԼՈԳԻԱՊԵՍ ԽՈՑԵԼԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ**

«ԷԿՈԼՈՒՐ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԿ

**«ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ՏԱՐՈՆԻԿ ԽՈՑԵԼԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ COVID 19 –Ի ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ»**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԷկոԼուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության կողմից իրականացվում է «COVID-19՝ նոր մարտահրավերներ էկոլոգիապես խոցելի համայնքներում» ծրագիրը, որի նպատակն է նպաստել էկոլոգիապես խոցելի համայնքների բնակչության սոցիալ-բնապահպանական իրավունքի պաշտպանությանը COVID-19-ի համավարակի պայմաններում: Ծրագրի շրջանակներում ՀՀ Արմավիրի մարզի Տարոնիկ և քաղաքային Արմավիր համայնքների բնակչության համար պատրաստվել են տեղեկատվական փաթեթներ, որտեղ ներառված են բնակիչների համար COVID-19-ով պայմանավորված իրազեկման թերթիկներ, ինչպես նաև սոցիալ-տնտեսական վիճակի մեղմացմանն ուղղված ՀՀ կառավարության սահմանած միջոցառումների սեղմագրերը:

Բնակիչների և համայնքների ղեկավարների համար կազմվել է Ծրագրի խնդիրներին առնչվող հարցաշար, ինչի պատասխանների, անցկացրած հարցազրույցների վերլուծությունն էլ հիմք է հանդիսացել սույն հաշվետվության համար:

Երևան, 2020թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՈՑԵԼԻ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքների ընդհանուր խոցելի կողմերն են՝ մեծ թվով սոցիալապես անապահով ընտանիքների առկայություն, աշխատատեղերի բացակայություն, բնակիչների անվճարունակություն, համայնքների ոռոգման ջրի պակաս, բնակավայրերի կանաչ գոտիների պակաս, մշակովի հողերի աղակալում, խմելու ջրի ոչ բավարար որակ, քանակ և դրա ներքին ցանցի վերանորոգման անհրաժեշտություն, ներհամայնքային փողոցների ոչ ասֆալտապատ վիճակ և անբարեկարգ միջհամայնքային ճանապարհներ և դրանց վերանորոգման հրատապություն, աղբահանության անբավարար վիճակ, միջուկային ճառագայթման վտանգ, «COVID-19-վ և հայ-արբեջանական պատերազմական վիճակով պայմանավորված առողջապահական, կրթական, սոցիալ-հոգեբանական, դեմոգրաֆիական նոր մարտահրավերների հաղթահարման դժվարություններ:

ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Համայնքի վարչական տարածքի մակերեսը՝ 2181,99 հա:
- Բնակչության թիվը՝ 37053 մարդ, որից, համապատասխանաբար, իգական՝ 52% և արական 48%: Տնային տնտեսությունների թիվը՝ 8000: Ընտանեկան նպաստի պետական համակարգում ներգրավված է 901 տնային տնտեսություն, նպաստառու ընտանիքների թիվը՝ 760: Արմավիրի զբաղվածության տարածքային կենտրոնում հաշվառված է 815 գործազուրկ:
- Բնակչության կազմը՝ հայեր, ռուսներ, քրդեր, եզդիներ, ասորիներ:
- Ունի 12 նախադպրոցական հաստատություն 1150 սանով, 9 միջնակարգ դպրոց մոտ 7000 աշակերտով և միջին մասնագիտական կրթական հաստատություններ, մշակույթի տուն, սպորտ դպրոց, հաստոցաշինական, կոնյակի, գինու, պահածոների ապակե տարաների, հացի, վերմուտի, ֆուրնիտուրայի, ռելեի, կաթի գործարաններ, կահույքի արտադրամաս, շինանյութերի արտադրամասեր: Գործում է «Արմավիր» բժշկական կենտրոնը և արտահիվանդանոցային բժշկական կազմակերպությունը:

Բնակչության հիմնական զբաղմունքը սպասարկումն է, արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, տրանսպորտը և կապը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմնում աշխատանքը և ՀՀ զինված ուժերում ու ոստիկանությունում զինվորական պայմանագրային ծառայությունը:

Համայնքը գտնվում է ՀԱԷԿ-ի 10 կմ ազդեցության գոտում, սակայն չունի «ազդակիր» համայնքի կարգավիճակ: 2015 թ. համայնքի ղեկավարի որոշումներով կազմվել են նորացված քաղաքացիական պաշտպանության և բնակչության տարահանման պլաններ:

Համայնքն ապահովված է շուրջօրյա խմելու ջրով: Համայնքի մեծ մասն ապահովված է ոռոգման ջրով, սակայն որոշ թաղամասեր անհրաժեշտություն ունեն ներքին ցանցի վերանորոգման: Աղբահանությունն իրականացվում է շաբաթը 6 անգամ:

Հողային ֆոնդի մոտ 75%-ն օգտագործվում է որպես բնակավայրի հող, որի կեսը տնամերձ հողերն են: Դրանք բանջարանոցներ և պտղատու, խաղողի այգիներ են: Բնակիչները զբաղվում են տեխնիկական մշակաբույս հանդիսացող խորդենու վերամշակմամբ, որից ստանում են եթերայուղեր:

Գյուղատնտեսական հողերի մակերեսը կազմում է 848,02 հա, որից 506,3 հա մշակվում են, իսկ 341,52 հա չեն մշակվում ոռոգման համակարգի բացակայության պատճառով:

Համայնքի հիմնախնդիրներն են՝ ներհամայնքային ճանապարհների վատ վիճակը, անձրևատար կոյուղու բացակայությունը, համայնքում գոյացած աղբի վերամշակման գործարանի բացակայությունը, համայնքի որոշ թաղամասերի ոռոգման համակարգի վատ վիճակը, համայնքի ազգաբնակչության զբաղվածության ցածր մակարդակը¹:



Նկար 1. Հանդիպում Արմավիրի քաղաքապետի հետ

ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Համայնքի վարչական տարածքի մակերեսը կազմում 10,50ք/կմ: Ծովի մակարդակից բարձր է 850մ: Բնակչության թիվը 2293 մարդ, որից արական՝ 1200, իգական՝ 1093, թոշակառուների թիվը՝ 218, ընտանեկան նպաստառուների ցուցակում ընդգրկված է 56 ընտանիք, տնային տնտեսությունների թիվը՝ 443:

Համայնքն ունի երկհարկ միջնակարգ լրիվ վերանորոգված դպրոց, համայնքապետարան, փոստ, բուժական ամբուլատորիա 6 բուժանձնակազմով, սակայն չունի առանձին շենք: Դպրոցն ունի 270 աշակերտ:

Համայնքի մանկապարտեզը 2014 թվականից չի գործում շենքի վթարային լինելու պատճառով, այն նախատեսված է 100 սանի համար:

Տարոնիկ համայնքում կենցաղային նպատակներով ջրհորներից օգտվել հնարավոր է, բայց խմելու համար ջուրը կամ հարևան գյուղերից են բերում, կամ գնում:

Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է: Համայնքի հողերի հիմնական մասն օգտագործվում են որպես վարելահողեր՝ զբաղեցնելով մոտ 231հա: Տարոնիկ համայնքի վարչական տարածքը կազմում է 1050,47 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 812,96 հա, որից քաղաքացիների սեփականության հողեր 547,93 հա,

¹ <http://armavir.mtad.am/QH/> <http://armavir.mtad.am/files/docs/24263.pdf>

համայնքային սեփականության հողեր՝ 139,0 հա: Արտավայրերը զբաղեցնում են 41 հա տարածք: Չմշակվող հողերը 55 հա են: Այդ հողերի չմշակման պատճառը ոռոգման խնդիրն է: Այդ խնդրի լուծման դեպքում հնարավոր կլինի բարելավել համայնքի բնակիչների սոցիալական վիճակը:

Տարոնիկ համայնքի հիմնախնդիրներից է նաև ճառագայթային վտանգը: Գտնվելով ՀԱԷԿ-ից 6-7 կմ հեռավորության վրա, համայնքն, ինչպես նաև 5-10 կմ հեռավորության վրա գտնվող 25 համայնքները, չունի «ազդակիր» համայնքի կարգավիճակ: Տարոնիկ համայնքի վարչական տարածքում են գտնվում ՀԱԷԿ-ի «Մև ջուր» ու «Փռուղ» պոմպակայանները, համայնքի տարածքով է անցնում ՀԱԷԿ-ին ջուր մատակարարող 14 կմ երկարությամբ խողովակաշարը, Փռուղ ջրամբարը, որոնք զբաղեցնում են ընդհանուր շուրջ 36 հա տարածք:

ԷկոԼուրի՝ նախկինում կատարած ուսումնասիրություններից պարզվել էր նաև, որ Տարոնիկ համայնքի բնակիչները ճառագայթային վտանգի դեպքում հնարավորություն չունեն պատսպարվելու: ՀԱԷԿ-ի ազդեցության գոտում գտնվող համայնքում առկա չեն նման դեպքերի համար նախատեսված թաքստոցներ: Որպես ժամանակավոր ապաստարաններ նախատեսված են բնակիչների նկուղները, բայց դրանց մակերեսը բավարար չէ համայնքի 2200-ից ավելի բնակչությանը պատսպարելու համար: Համայնքում միջուկային անվտանգության վերաբերյալ ուղղորդող պաստառներ չկան, իսկ միջուկային վտանգի դեպքում բնակչության տարահանման պլանը հասանելի չէ բնակիչների համար, բնակիչներն ապահովված չեն ճառագայթային վտանգի դեպքում անհրաժեշտ առաջնային օգտագործման պարագաներով. չունեն դիմակներ, հակազագեր²:

ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրների մեջ կարևորվում է ոռոգման ջրի սակավությունը: Ոռոգման ջրի բացակայության պատճառով համայնքի ոռոգելի տարածքների ավելի քան 55 հա-ն այսօր չի մշակվում:

Ոռոգման ջրի սակավության պատճառով վերջին 10 տարում բոլոր բնակիչներն են ունեցել եկամուտների զգալի կորուստներ, հատկապես բանջարանոցների սակավաջրման հետևանքով բանջարանոցային կուլտուրաների իրացումից ստացվող եկամտի մասով, կամ պայմանավորված հողերի որակի փոփոխման հետևանքով որոշ մշակովի տեսակների կորստի և դրանց իրացումից ստացվող եկամտի մասով: Բնակիչների մի մասը ոռոգման ջրի սակավության պատճառով ստիպված է եղել չմշակել գումարային 15,13 հա մակերեսով գյուղատնտեսական հող: Բնակիչները ստիպված իրենց հողատարածքները ոռոգում են կեղտաջրերով: Ըստ Տարոնիկ համայնքի 2017-2023թթ. զարգացման ծրագրի, ոռոգման համակարգի վերակառուցման դեպքում գյուղատնտեսության արդյունավետությունը հնարավոր կլինի բարձրացնել 25%-ով, և համայնքի սեփական եկամուտները կաճեն 28%-ով³:

Համայնքում խմելու ջրի նախկին հորերում ջրի մակարդակները կա՛մ իջել են, կա՛մ ցամաքել, ինչի արդյունքում համայնքի բնակիչները 2005 թվականից ունեն նաև խմելու ջրի խնդիր: Վերջին շրջանում Տարոնիկի համայնքապետարանը «Վերջին օրերի սրբերի

²<https://www.ecolur.org/files/uploads/2019/ANPP%20Social%20report20112019/armreportonsocialsituationinanppimpactcommunities20112019.pdf>:

³ [http://armavir.mtad.am/VTSS/24293\(5\).zip](http://armavir.mtad.am/VTSS/24293(5).zip)\Taronik - ZIP archive, unpacked size 386

կազմակերպության» աջակցությամբ իրականացրել է 6 կմ երկարությամբ խմելու ջրի խողովակաշարի կառուցում: Ըստ համայնքապետարանի աշխատակիցների՝ 85 մ խորությամբ հոր են հորատել, որից ջուրը խողովակներով հոսում է և ջրով ապահովում համայնքի մինչև 20-30%-ն, սակայն բնակիչների մի մասը պնդում է, որ այդ ջուրը հնարավոր չէ խմել, քանի որ այն պիտանի չէ խմելու համար:

Նախկինում ԷկոԼուրի կատարած ուսումնասիրությունների արդյունքում պարզվել էր, որ բնակիչների կարծիքով ջրի սակավությունը և խորքային հորերի ցամաքելու պատճառը պայմանավորված է Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի՝ ձկնաբուծության նպատակով անխնա և անսահմանափակ օգտագործմամբ, և որ «Արմավիր» ՋՕԸ-ն իր հերթին ջրի հաշվառքի սարքերով բնակիչների ոռոգելի տարածքների գլխամասը չի ապահովել, և որ այդ սարքի ստուգաչափման, ցուցմունքի գրանցման, ժամանակավորապես չախատելու դեպքում դրա կապարակնքման պայմանի մասին իրենք իրազեկված չէին⁴:

Հարցին լուծում տալու ակնկալիքով ԷկոԼուրը 2019 թվականի հուլիսի 31-ին բաց նամակով դիմել էր ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին, որում, ի թիվս այլ հարցերի, մասնավորապես, նշվել էր. «Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքը խմելու ջուր չունի: Բարեգործական մի կազմակերպության օգնությամբ խորքային հոր է փորվել, որը խմելու ջրով ապահովում է համայնքի բնակչության մի չնչին մասին: Սակայն ոչ բոլոր բնակիչներն են վստահում այդ ջրի որակին և ջուրը կա՛մ գնում են, կա՛մ բերում հարևան համայնքներից»: Ի արձագանք նամակի, ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչական մարմինը վարչական վարույթ էր հարուցել համայնքի նկատմամբ, որոնց արդյունքների մասին էլ տեղեկացրել է ԷկոԼուրին: Պատասխանի մեջ, մասնավորապես, նշված է. «Արմավիրի մարզի Տարոնիկ համայնք ջուրը բնակչությանը խմելու նպատակով դեռ չի տրվում, տրվում է օրական 1 ժամ կենցաղային նպատակների համար, բնապահպանության նախարարության կողմից ջրօգտագործման վերաբերյալ թույլտվության բացակայության պատճառով: Վարույթի շրջանակներում լաբորատոր փորձաքննության նպատակով նմուշառված խմելու ջրի 2 նմուշներում մանրէաբանական ցուցանիշներով արձանագրվել են N 2-III-U2-1 նորմերի շեղումներ: Հարուցված վարչական վարույթը կարճվել է վարչական իրավախախտման կազմի բացակայության հիմքով»⁵:

Համայնքը չունի կոյուղու համակարգ:

⁴ <https://www.ecolur.org/files/uploads/2019/Pure%20Water%20reports/taronokhashvetvutyun.pdf>:

⁵ <https://www.ecolur.org/hy/news/water/11737/>



Նկար 2. Հայկական ատոմային էլեկտրակայանը

ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՄԲ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի շրջանակներում 2 համայնքում անցկացված հարցազրույցին մասնակցել է 21 բնակիչ՝ 12 կին և 9 տղամարդ, այդ թվում՝ Տարոնիկի համայնքապետը և Արմավիրի քաղաքապետը: Կատարված հարցազրույցների վերլուծությամբ պարզվեց հետևյալը՝

Սոցիալական ոլորտ

1. Հարցման մասնակիցները նշել են, որ համայնքների սոցիալ-տնտեսական կյանքի դժվարությունները կապված են աշխատատեղերի բացակայության (31,03%), կատարված աշխատանքի դիմաց ստացված ոչ-համարժեք, ցածր աշխատավարձի (37,93%), ստացված գյուղատնտեսական մթերքների իրացման դժվարությունների (6,9 %), սակավաջրության և խմելու որակի ջրի բացակայության(20,69 %), հողի և մթնոլորտային օդի աղտոտվածության (3,5 %) հետ:
2. Հարցման բոլոր մասնակիցները նշել են, որ COVID-19-ով պայմանավորված նվազել են իրենց ընտանիքի եկամուտները, քանի որ կա՛մ կրճատվել են իրենց աշխատավայրերի՝ սպասարկման ոլորտի ծառայությունների ծավալները, կա՛մ ընտանիքի անդամները չեն մեկնել արտագնա աշխատանքի, կա՛մ առողջապահական և կրթության ծախսերը հոգալու համար կատարվել են չպլանավորված ծախսեր:
3. Տարոնիկ համայնքի բնակիչների մի մասը նշում է, որ իրենց ընտանիքի անդամներն արտագնա աշխատանքի էին մեկնում արտերկիր, սակայն այս տարի, պայմանավորված համավարակով, չեն մեկնել, ինչի արդյունքում նվազել են իրենց ընտանիքի եկամուտները և չմեկնած անձինք կա՛մ մնացել են պարապ, կա՛մ էլ ունեն թեթև զբաղվածություն ընտանեկան գործերում:
4. Արմավիրի քաղաքապետը նշեց, որ արտագնա աշխատանքի չմեկնածները հիմնականում ընդգրկվել են քաղաքում ընթացող շինարարական աշխատանքներում, և այդ խմբի համար չկա գործազրկության խնդիր:
5. Գյուղատնտեսությամբ զբաղվող հարցվածները պատասխանել են, որ COVID-19-ով պայմանավորված արտակարգ դրության օրերին աշխատատեղեր կորցնելու և

դրանով պայմանավորված աշխատավարձերի կրճատման վերաբերյալ խնդիրներ չեն ունեցել:

6. Ըստ հարցվածների, գյուղատնտեսական աշխատանքների վրա COVID-19-ը թողել է նվազ ազդեցություն, քանի որ ֆերմերները բաց տարածքում են իրականացրել իրենց աշխատանքները: Առանձին դեպքերում, մասնավորապես, ստացված ծիրանի բերքն արտերկրում իրացման հետ կապված խնդիրներն արագ գտել են իրենց լուծումները: Խաղողի մթերման հարցում նույնպես չեն ծագել խնդիրներ:
7. Ըստ Արմավիրի քաղաքապետի, ինչպես ամբողջ Հանրապետությունում, այնպես էլ Արմավիր քաղաքում, ավելացել են սոցիալական խնդիրները, կապված պատերազմի և դրա հետևանքների հետ: Մասնավորապես, Արցախի Հանրապետությունից պատերազմի հետևանքով Արմավիր քաղաքում ապաստան է գտել 960 մարդ՝ 291 ընտանիք: Այդ առումով Արմավիր քաղաքում արձանագրվել է սոցիալական բեռի ավելացում և պատերազմական օրերին քաղաքապետարանը COVID-19-ի կանխարգելմանն ուղղված միջոցների օգտագործման վեկտորն ուղղել է ապաստանած մարդկանց օժանդակությանը: Քաղաքը, բացի դեռևս չճշտված տվյալներով անհետ կորած և գերեվարված ժամկետային և պայմանագրային զինծառայողներից, տվել է 27 զոհ (առ 24.11.2020թ.), որոնց թաղման արարողությունների և ծիսկարգերի կազմակերպման համար նույնպես կատարվել են ծախսեր: Առանց կերակրողի մնացած ընտանիքների հետագա կեցության ապահովման մի մասի պատասխանատվությունը, ըստ նրա, պետք է ստանձնի քաղաքապետարանը:
8. Համայնքներում արձանագրվում է հուսալքություն՝ կապված պատերազմի աղետալի հետևանքների, ռազմական դրության ժամկետի անորոշության և COVID-19-ի համավարակի ընթացքի հետ:

Բժշկական սպասարկման ոլորտ, բժշկական հաստատությունների վիճակը

1. Կորոնավիրուսային վարակվածության վերաբերյալ համայնքի բնակչության իրազեկվածության մակարդակը բավականին բարձր է. գիտեն ախտանշանների մասին, գիտեն իրենց գործողություններն այդ պարագայում: Ըստ հարցման մասնակիցների, իրենք հետևում են հակահամաճարակային կանոններին, կրում են շնչադիմակ, ախտահանում են ձեռքերը, օդափոխում են սենյակը, վարակվածության կասկածի դեպքում մեկուսանում են ընտանիքի անդամներից, զանգահարում են ընտանեկան բժշկին, կամ կանչում շտապօգնություն:

2. Հարցվածների 40,0 %-ը պատասխանել է, որ առողջական խնդիրներ ունենալու դեպքում դիմում է համայնքային բուժկետ, 40,0 %-ը՝ համայնքային բուժսպասարկման կետ և մարզային առողջապահական կենտրոններ, իսկ 20,0%-ը՝ համայնքային բուժսպասարկման կետ, մարզային և Երևանի առողջապահական կենտրոններ:

3. Համայնքներում գործող բուժապասարկման կետերի կողմից COVID-19-ի իրավիճակի պահանջներին համապատասխան բուժապասարկումից զոհ է հարցվածների 26.0%-ը, իսկ 74 %-ը դժգոհ են:

Պետական, ՏԻՄ, մասնավոր հաստատություններից ստացվող աջակցության նկարագիրը

1. ՀՀ կառավարության կողմից իրականացված COVID 19-ի մեղմման սոցիալական ծրագրերից օգտվելու ժամանակ ծագած խնդիրների վերաբերյալ հարցին, հարցված բնակիչները նշեցին, որ չեն բախվել որևէ դժվարության, մի մասը, սակայն նշել է, որ օժանդակության տրամադրման գործընթացում տեղի են ունեցել անհարկի ձգձգումներ:

2. Հարցվածների գերակշիռ մասը պատասխանել է, որ չի օգտվել ՀՀ կառավարության Կորոնավիրուսի սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրերով սահմանվող օժանդակություններից, բացառությամբ բնական գազի մատակարարման և էլեկտրական էներգիայի մատակարարման դիմաց տրված, ինչպես նաև 0-18 տարեկան երեխա ունեցող ընտանիքներին տրված միանվագ դրամական օժանդակություններից:

3. Որոշ հարցվածներ դժգոհեցին գյուղատնտեսական արտոնյալ վարկերի տրամադրման գործընթացից և այդ նպատակով բանկերի մոտ մարդկային կուտակումներից, որն ինքնին, հանդիսանում է COVID-19-ի տարածման աղբյուր:

4. Տարոնիկի համայնքապետը նշեց, որ օժանդակել է տարբեր կազմակերպությունների կողմից տրամադրված օգնության բաշխման գործընթացին: Համայնքապետարանն իր հերթին 165500 դրամական օգնություն է տրամադրել համայնքի կարիքավոր 31 ընտանիքի: Նա նաև նշեց, որ սահմանված կանոնների պահպանման նկատմամբ իրականացնում է հսկողություն, վարակվածների թվի վերաբերյալ տրամադրում է տեղեկատվություն մարզային համակարգող կառույցներին, մի քանի անգամ կազմակերպել է շնչադիմակների տրամադրման ակցիա:

5. Արմավիրի քաղաքապետը նշեց, որ օժանդակել է տարբեր կազմակերպությունների կողմից տրամադրված օգնության բաշխման գործընթացին: Քաղաքապետարանն իր հերթին համայնքային այլ ծրագրերից կատարված վերաբաշխման-մասնահանման արդյունքում կարողացել է COVID-19-ի հետևանքների մեղմացման նպատակով 3-4 մլն. դրամի օգնություն ցուցաբերել համայնքի կարիքավոր բնակիչներին (մեկ անձի հաշվարկով 6000 դրամ), կազմակերպել է հասարակական շինությունների և փողոցների ախտահանման աշխատանքները: Նա նաև նշեց, որ COVID-19-ի կանխարգելման համար սահմանված կանոնների պահպանման նկատմամբ իրականացնում է հսկողություն, վարակվածների թվի վերաբերյալ տրամադրում է տեղեկատվություն մարզային համակարգող կառույցներին, մի քանի անգամ կազմակերպել է շնչադիմակների և անհատական պաշտպանության այլ միջոցների տրամադրման ակցիա:

6. Հաշվի առնելով 2020 թվականին ծագած համավարակի և պատերազմական իրավիճակի մարտահրավերների փորձը՝ 2021 թվականի համայնքային բյուջեում՝ Արմավիր քաղաքի ավագանին արդեն նախատեսել է 3,0 մլն. դրամի ծախս՝

արտակարգ իրավիճակների կանխարգելման նպատակով օգտագործելու, ինչպես նաև այլ անակնկալ մարտահրավերների լուծման համար:

7. Ըստ Արմավիրի քաղաքապետի, պատերազմական իրավիճակը պարտադրել է կատարելու քաղաքի քաղաքացիական պաշտպանության պլանների վերանայում, ինչպես նաև քաղաքում գոյություն ունեցող թաքստոցների և ապաստարանների ֆունկցիոնալության գույքագրում: Պատերազմական օրերին սերտ համագործակցել են ՀՀ արտակարգ իրավիճակների (ԱԻՆ) նախարարության և տեղական ինքնակառավարման մարմինների մասնագետները: ԱԻՆ-ի մասնագետները քաղաքի բնակչությանը տեղեկացրել են արտակարգ իրավիճակներում օգտագործվող տեխնիկական միջոցներին և անցկացրել գործնական պարապմունքներ դրանց օգտագործման և սպասարկման համար:

8. COVID-19-ի պայմաններում հայտարարված արտակարգ և պատերազմական իրավիճակներում Տարոնիկ համայնքը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի, կամ որևէ այլ մասնավոր կամ պետական կառույցի կողմից աջակցություն չի ստացել, բացառությամբ մեկ մասնավոր կազմակերպության, որը մինչ պատերազմն իր միջոցներով ախտահանել է Տարոնիկ գյուղի փողոցները և ցուցաբերել աջակցություն համայնքի բնակիչների մի խմբի:

9. COVID-19-ի պայմաններում հայտարարված արտակարգ և պատերազմական իրավիճակներում Արմավիրի քաղաքապետարանը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից աջակցություն չի ստացել, սակայն 10 մասնավոր կազմակերպություն և բիզնես ծրագրեր օժանդակել են համայնքի առջև ծագած խնդիրների լուծման գործընթացին:

Ուսուցման կազմակերպումը

COVID-19-ի պայմաններում ներդրված հեռավար ուսուցման հետ կապված հարցվածները նշեցին, որ իրենց երեխաները ստացել են ոչ լիարժեք կրթություն: Ունեցել են դժվարություններ՝ կապված համապատասխան համակարգչային տեխնիկայի, կամ ինտերնետային կապի խափանման հետ: Ինտերնետային կապից չեն կարողացել օգտվել լրացուցիչ ֆինանսական հնարավորություններ չունենալու պատճառով: Աշակերտ-ուսուցիչ ուղղակի շփման խոչընդոտի չհաղթահարման հետևանքով երեխաները տարել են հոգեբանական սթրեսներ: Ընդհանուր առմամբ հարցվածներն իրենց երեխաների ստացած դպրոցական և հետբուհական կրթությունը գնահատում են ցածրորակ և ոչ լիարժեք:

Շրջակա միջավայրը

1. Հարցվածները նշել են, որ առաջացել է շրջակա միջավայրի աղտոտման նոր՝ վտանգավոր դրսևորում, մասնավորապես, համայնքների տարածքի աղտոտում օգտագործված դիմակներով և ձեռնոցներով:

2. Հարցվածների միայն 40,0 %-ն է նշել, որ համավարակի պայմաններում պատկան մարմինները պատշաճ ձևով արձագանքել և լուծում են տվել իրենց բարձրացրած սոցիալ-էկոլոգիական խնդիրներին, իսկ 20,0 %-ն էլ պատասխանել է, որ իրենց բարձրացրած հարցերը չեն ստացել արձագանք, մնացած 40,0 %-ը հարց չի բարձրացել:

3. Նվազել է համայնքային խնդիրների շուրջ տեղի ունեցող հանրային կարծիքի արտահայտման հնարավորությունը, քանի որ ստեղծված իրավիճակում ժողովրդի կարծիքն իմանալու համար հանրային լսում կազմակերպելը դարձել է անհնարին:

4. Արարատյան արտեզյան ավազանի ջրերի մակարդակի նվազումն ուղղակիորեն ազդում է բնակչության գյուղատնտեսական աշխատանքներից ստացված եկամուտների վրա, քանի որ կրճատվել է ոռոգվող հողատարածքների մակերեսը, ամռան սեզոնին ջրի պակասի արդյունքում բերքը չորանում է, կրճատվել են արոտավայրերը: Վարելահողերն աղակալվել են, այլևս չեն աճում ավանդական որոշ բանջարաբոստանային կուլտուրաներ:

5. Ըստ Արմավիրի քաղաքապետի, չնայած նրան, որ ՀԱԷԿ-ի շահագործման անվտանգությանը վերաբերող և ռադիոակտիվ թափոնների թաղման վերաբերյալ քննարկումներին մասնակցություն չի ունեցել իր պաշտոնավարման ժամանակ, այնուամենայնիվ, քաղաքացիների քաղաքացիական պաշտպանության խնդիրների կազմակերպման, ճառագայթային հնարավոր վտանգների դեպքում քաղաքացիների անվտանգության և տարահանման հարցերը միշտ էլ եղել են իր ուշադրության կենտրոնում: Նա կարևորեց նաև այդ հարցերում բնակիչների իրազեկվածության բարձրացումը, հույս հայտնեց, որ ՀԱԷԿ-ի նոր դեկավարության հետ կկարողանա ստեղծել փոխհամագործակցության հուսալի հարթակ:

6. Ոռոգման ջրի մատակարար «Արմավիր» ՋՕԸ-ի կողմից ոռոգման կազմակերպման աշխատանքները կանոնակարգված չեն, հաճախակի են ոռոգման ջրի անարդարացի բաշխման դեպքերը, ջրի բաշխման ոչ անընդհատականության ապահովումը, ջրաչափերի բացակայության պատճառով ոռոգման ջրի ոչ ճշգրիտ հաշվարկման պրակտիկան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տեղի բնակիչների շրջանում ԷկոԼուրի 2020 թվականի նոյեմբերի 24-ին կատարած ուսումնասիրությունների, ինչպես նաև նախորդ այցելությունների արդյունքում համայնքներում արձանագրած փաստերի վերլուծությունից պարզ դարձավ, որ համայնքներում COVID-19 համավարակով և պատերազմական իրավիճակով պայմանավորված առաջացել են նոր մարտահրավերներ: Մասնավորապես՝

1. Արտազնա աշխատանքի մեկնելու սահմանափակման արդյունքում մեծ թվով մարդ մնացել է համայնքներում, ինչի հաշվին աճել է գործազրկությունը:

2. Ավելացել են լրացուցիչ սոցիալական խնդիրներ, տեղի է ունեցել բնակչության եկամուտների կորուստ:

3. Կրճատվել են սպասարկման ոլորտի, բիզնես ծառայությունների աշխատանքների ծավալները, տեղի է ունեցել փոքր ու միջին բիզնեսի գործունեության ծավալների կրճատում:

4. Հեռավար եղանակով ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների ձեռքբերման համար բնակչության շրջանում առաջացել է լրացուցիչ ծախսերի անհրաժեշտություն: Ընդհանուր առմամբ հեռավար ուսուցման համակարգը չի ապահովում բավարար կրթական որակ:

5. Շատ ընտանիքներում մահացած, վիրավորված և գերեվարված զինվորների առկայության հետևանքով բնակիչներն ապրում են հոգեբանական սթրեսներ, ծագել են նոր սոցիալ-հոգեբանական խնդիրներ:

6. COVID- 19-ի դեմ պայքարում տեղական ինքնակառավարման մարմինների ներուժի չօգտագործման հետևանքով համավարակի դեմ ձեռնարկված միջոցառումները լիովին չեն իրագործվում:

7. Բնապահպանական, այդ թվում նաև վարելահողերի աղտոտման, ինչպես նաև խմելու և ոռոգման ջրի սակավության խնդիրները շարունակում են մնալ օրակարգային:

8. Համայնքներում արձանագրվում է հուսալքություն՝ կապված պատերազմի աղետալի հետևանքների, պատերազմական դրության ժամկետի անորոշության և COVID-19-ի համավարակի ընթացքի հետ:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

- Հարցման մասնակիցները կարծում են, որ ստեղծված իրավիճակից դուրս գալուն կօգնեն բնակչության զանգվածային թեստավորումները, պետության կողմից համավարակի տարածման կանխմանն ուղղված արդյունավետ միջոցառումները:

- Հարկավոր է մոբիլիզացնել տեղական հասարակական ռեսուրսները և տեղի բնակչությանը համավարակի դեմ պայքարում, որպեսզի փոխվի անձի վարքը, նրա սոցիալական պատասխանատվության դերը:

- Հաշվի առնելով Արարատյան արտեզյան ավազանի ջրերի ռազմավարական նշանակությունը Հանրապետության համար՝ անհրաժեշտ է սահմանափակել ձկնաբուծության նպատակով տրվող ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումը, խիստ հետևողական լինել ջրօգտագործման թույլտվություններով տրված չափաքանակների ռացիոնալ օգտագործման նկատմամբ, կոնսերվացնել ջրօգտագործվող հորերը, գտնել մեխանիզմներ Մեծամորի կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայանի շինարարության համար:

- Հաշվի առնելով համայնքների՝ ՀԱԷԿ-ի ազդեցության անմիջական գոտում գտնվելու հանգամանքը՝ համայնքներին տալ «ազդակիր համայնքի» կարգավիճակ՝ դրանից բխող որոշակի արտոնությունների սահմանմամբ և բնակչությանն ապահովել ճառագայթային անվտանգությունն երաշխավորող միջոցներով՝ ազդարարման գործիքներ, թաքստոցներ, ապաստարաններ, անձնական պաշտպանական առաջնահերթ պարագաներ:

- Հատուկ ուշադրություն դարձնել գործող բժշկական հաստատությունների արագ վերապրոֆիլավորման մեխանիզմների ներդրմանը, այդ հաստատությունները համալրել հնարավորինս նոր սարքավորումներով և բարձր մասնագիտական կարողություններ ունեցող բժշկական անձնակազմով: Հոգեբանական սթրեսներ ապրող բնակչության շրջանում կազմակերպել մասնագիտական-հոգեբանական ուսուցողական դասընթացներ:

- Ավելի գործուն սոցիալական աջակցություն ցուցաբերել համայնքների ազգաբնակչությանը:

- Ապահովել բնակչության COVID-19-ի համատարած թեստավորում, այդ ընթացքում սահմանել արտոնություններ բնակչության անապահով խավերի համար: Ուժեղացնել մեկուսացման մեջ գտնվող COVID-19-ով վարակակիրների նկատմամբ վերահսկողությունը:

- Հարկադիր աշխատանքային պարապուրդի մատնված բնակիչների համար առաջարկել արտոնյալ բիզնես ծրագրեր, օժանդակել դրանց իրականացմանը:

- Շարունակել տրվող տեղեկատվությունը համավարակի վերաբերյալ, կարևորել բնակչության շրջանում սոցիալական ինքնազիտակցության բարձրացմանն ուղղված քարոզարշավի անհրաժեշտությունը՝ բարձրացնելով անձի սոցիալական պատասխանատվության ենթամշակույթը: